

Աղբիկոես — ա՛վա՛լին ա՛յադա՛թ է քա՛սան է դամադ, բա՛րա յէ դիդա՛ն է դոխթա՛ր է մոուրեղ է նա՛զա՛ր: Մի շարք գլխարաներ էլ ուղղակի պատճենված են՝ Մովսէսն — զօզդ է դա՛րեայի. Մովսէսն — չա՛նց է դա՛րեայի:

Հեղինակն իր օգտագործած աղբյուրներից բացի բառարան է մուծել նաև նոր բառեր՝ Տիեզերագնաց — ֆա՛զանա՛վա՛րդ, արեգեհանավ — քա՛շթի յէ ֆա՛զայի և այլն:

Ժամանակակից բառարանագրությունը մեծ կարևորություն է տալիս դարձվածաբանությունը: Այդ հանգամանքը բաշ զիտակցել է գրախոսվող բառարանի հեղինակը, բայց ներառություն չի ունեցել իր բառարանը հարստացնել ժամանակակից հայերենի դարձվածքներով և կապակցություններով: «Ցանկալի էր, — գրում է վ. Հարությունյանը, — որ ներկա աշխատանքն էլ նոխազված լիներ օրինակներով, սակայն գործը բավական առաջացած էր, երբ այս միտքը հղացվեց»: Հեղինակը խոստանում է հրատարակելիք ընդարձակ բառարանների մեջ լրբացնել այդ բացը:

Հայերեն-պարսկերեն այս բառարանը ունի նաև առկերտ: որոշ կոդներ: Այսպես, մի շարք հայերեն գլխարանների տարբեր նշանակությունները պարզ չեն տրված: Երկնային թարգմանական բառարաններում համանուն բառերի բացատրության ժամանակ ավելի զգուշություն է

պահանջվում: Օրինակ, համ, համար, մարտ, պարկ, շահ և այլ, համանուն ունեցող բառերի թարգմանության ժամանակ, գլխարանից հետո փակագծված կամ բռնել համարժեքով պետք է ցույց տալ գլխարանի նշանակությունը, այլապես երկրորդ լեզուն չափրապետողը կարող է նա՛րա՛րդ, չա՛նց, փէյհար, մօրաբէգէ պարսից բառերը գործածել կովի փոխարեն՝ մարտ ամսի համար, կամ — սուղ, նա՛ֆր, մե՛նֆա՛րա՛ր, բա՛հրէ, Նօզուլ, բանգիլ բառերը՝ շահի, օգուտի փոխարեն՝ շահ, աբա բառերի համար: Որոշ բառահոգվածներում չեն բացատրված հայերեն գլխարանի տարբեր առումները (ինչպես՝ Բենս — միխ զօթը): Բառարանում, զժբախտաբար, տեղ են գրավել նաև նեղ բարբառային, նուշինակ գոեհիկ բառեր (ղաեջըղ դուլդուր, էրփրել և այլն):

Մեր այս դիտողությունները չեն իջեցնում «Հայերեն-պարսկերեն բառարանի» արժեքը, այլ բարի ցանկություններ են՝ հեղինակի հետագա աշխատություններն ավելի անթերի տեսնելու ակնկալությամբ:

«Հայերեն-պարսկերեն բառարանը» շնորհակալ և բազայերանքի արժանի աշխատանք է և հիմնարար՝ աղագայում հրատարակվելիք նույնատիպ ավելի ընդարձակ ու անթերի գործերի համար:

Թանասիր. զիտ. դոկտոր Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

«ԱՅ ԳԱՐԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ (1794—1967)»

(համահավար ցանկ), կազմեց՝ Ա. Կիրակոսյան, խմբագրություն և առաջաբան՝ Հ. Կոստիկյանի և Հ. Սիլվանյանի, Երևան, 1970, 624 էջ, գինը՝ 4 ռ.:

Վերջերս միայն ներառություն ունեցա ստանալու «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» աշխատությունը: Ասկառակ հոն տարված որոշ աշխատանքին ու եղած բաղմաթիվ դիմումներով՝ մեր շատ մը հայտնի գրապահոցներուն, գործը կկրէ, ցավ ի սիրտ, դրոշմը ձախողած հրատարակության: Ակերախ են աննշտություններ և նշանակալից վրիպումներ, որոնք խստորեն կիջեցնեն անոր արժեքը:

Հայտնի է, թե մեր մոդոփորդի կյանքի պայմանները անցյալին մեջ ունեցած են իրենց հոռի անդրադարձումը մամուլի բնականոն գրգաղման և համախմբվածության վրա և ասով իսկ դժվարացուցած համադրումի ամեն աշխատանքը: Սակայն կազմողի ու խմբագրողներու մտահոգություններուն գլխավորը պետք էր ըլլալ՝ օգտվիլ անցյալի փորձերին ու շինալ նորանոր սխալներու մեջ: Գեթ տալ նշգրիտ պատկերը հայ պարբերական մամուլի Մատենագի-

տությունը այլևս կյած է սովորական գրացուցակ մը, թերթերու հասարակ թվագրում մը ըլլալու սահմաններին: Հոն կպահանջվի տեսակ մը մասնատիկական ճշգրտություն: Ատեն է, որ տրվի յուրարանչյուր թերթի այսպես կոչված «կենսագրությունը»՝ երբ յույս տեսած ըլլալու, կրած փոփոխություններու, ժամանակավոր կամ վերջնական գաղարի թվականները և այլն, տեսակ մը գիտական մերձեցում տրվի նկարագրումին մեջ այն պարբերականներու, որոնք զեթ կզրտներվին անմիջական տրամադրության տակ, Հայաստանի և սոհասարակ Մովստական Միության հարուստ գրապահոցներուն մեջ: Սփյուռեն հայլայլված տեղեկություններու համար հարկ կըլլա օգտվիլ, հնարավորին չափ, առարկայական ու վավերական տվյալներու: Այս բոլորիս համար, սակայն, կկարծենք, թե «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» պատրաստող մը հարկ է որ ունենա տարրական ծանո-

թուփյուն նյութի մասին, որուն ձևն արկած է: Լրդարև, ինչպե՞ս չցավի լրագիրներու և պարբերական հանդեսներու անտեղի, բռնազրոսի՛ տարանջատումեն առաջացած անճշտություններու վրա, երբ ամսաթերթեր անցված են լրագիրներու բաժնին մեջ և փոխադարձաբար: Օրինակներով խոսինք. թ. 167— «Արծիվ», որ անցած է լրագիրներու բաժնին մեջ իբր օրաթերթ, երբև լրագիր կամ օրաթերթ չէ եղած, այլ կաղն ի կաղ հրատարակվող ամսաթերթ մը. կամ՝ թ. 378— «Էլեկտրոմեքենաշինարար», թ. 379— «Էկրանի նորություններ», թ. 575— «Կես կատակ կես իրավ», թ. 663— «Հայ միտք» և այլս. հարյուրներով այսպես, որոնք պարբերականներ են, շես գիտեր ինչու՝ անցված են լրագիրներու ցանկին մեջ: Նույն բանը հանգեսներու ցանկին մեջ:

Մատենագիտության կոչումին հետ անհաշտ կցտեսներ ուղղակի պարբերական մամուլի հետ անմիջական առնչություն չունեցող հրատարակություններու մուտքը: Տեղեկագիրներու, միօրյա հրատարակություններու, օրացույցներու և խմորատիպ թերթերու տեղը հոս չէ: Անոնց հիշատակումը նպատակ ունի կարծես միայն թիվ լեցնելու Հայտնի է, որ առանց այս բռնազրոսիկ և անիմաստ հիշատակությանց էլ, մեր պարբերական մամուլի թիվը 3000-ի շուրջը կդառնար:

Ի դեպ, փորրիկ շեղում մը՝ կարգ մը անտեղի հիշատակություններու առթիվ: Տեղեկագիրներու, տարեկան ղեկույցներու, օրացույցներու խախտարգետ ներմուծումն է այդ, որուն համար զո՞՞ գացած ըլլալ կրկին ուրիշի մը սխալ փորձին: Իսկ զալով խմորատիպ թերթերու պարագային, զանոնք լիարժեք հրատարակություններ նկատելի ի սպառ հեռու, մասամբ հանդուրժելի պիտի ըլլար հիշատակել միայն առանձին հավելվածի բաժնի մը մեջ, և այդ բանը՝ լոկ կորուստն փրկած ըլլալու համար լրագրական նախնական մեկ ճյուղը, որ ժամանակն ու դեպքերը մասամբ հատկանշելն դատ, համեստ նպաստ մըն են մեր կարգ մը գրական ղեմքերու կենսագրություն:

Գրախոսվող աշխատության մեջ «Նորարարությունը», սակայն, իր զագաթնակետին հասած կցտեսմ կարգ մը հրատարակություններու թիածո հիշատակությամբ: Երբև՞ն ի վեր Մ. Պոտորյանի «Հայ հանրագիտակը», Մ. Երվանտերյանի «Եման», Տ. Զիթունի «Հուշիկը Հայաստանին», Թ. Ազատյան—Մ. Գոչունյանի «Արմաղանը» և նման ուրիշներ անցած են հայ պարբերականներու շարքը: Հայտնի է թե ասոնցմն մեկ մասը կենսագրական հատորներ են, ուրիշներ՝ կար ու ձևի հրատարակություններ կամ հիշատակի հատորներ և այլի:

Ուրիշ զարտուղություն մ'ալ թույլատրված է արարատառ թուրքերեն թերթի հիշատակությամբ: Հ. Պարոնյանի գրչեն ելած ըլլալը արդարացում մը չէ, թուրքերեն «Թիագրո» թերթի ներկայությանը հատորիս մեջ: Նույնպես դուրս պիտի ձգվին բոլոր բացառիկ թիվերն ու խախտարգետ շարքը զանազան առիթներու լույս տեսած այլազան թուրքերեն: Այս վերջինները կարելի է տալ հավելվածի առանձին բաժնով, բայց բնավ երբև՞՞ հալ պարբերական մամուլի շարքին:

Աշխատությանս մեջ նկատելի են նաև խել մը ազավազումներ անուններու և հրատարակություններու: Անոնց թվումը հոգնեցուցիչ աշխատանք մը պիտի ըլլար, փորձինք մեկ քանինները հիշատակել հոս: Վահան Գ. Զարգարյանը եղած է Վարդան Զարգարյան (թ. 3126), Ահարոնյան Գերսամ՝ եղած է Գեղամ, էլճանյան Ա. եղած է էլոյան. Կ. Կ. Ղազարոսյան՝ եղած է Ղազարյան, Մուշյանը եղած է Մուշեղյան, Նր. Մեսիայանը՝ Մեսիսյան, Խորեն Ճամճյանը՝ Սամսեյան, Միսաք Սուրյանը՝ Սուրենյան, «Խարազան» թերթը եղած է Խարազյան, «Շարժում Իլավեսին»՝ Իվավեսի, «Մախլաս» երգիծաթերթը եղած է Մախլաս, «Առավոտ նորահասներու»՝ եղած է նորահասներու, «Հունահայ տարեգիրքը» եղած է Հունաց տարեգիրք, «Շնորհաց ցողեր» թերթը՝ Շնորհայ ցողեր, վերջապես՝ Միհրան Տամատյանը՝ Տոմատյան, Օշականը՝ Օշակյան և այլն: Ասոնց շարքը կարելի է երկարել:

Պակաս չեն նաև կրկնություններ կարգ մը թերթերու. այսպես՝ կրկնված են «Ազատամարտ» թերթը (թթ. 14 և 23), «Արշալույս», Ջմյունիա (թթ. 180 և 182), «Մեղու Հայաստանի» (թթ. 805 և 2575), «Հայագիտական հասկ», Անթիլիաս (թթ. 2278 և 2400), «Նոր այգ», Թեհրան (թթ. 862 և 2673), «Եվրոպա» (թթ. 820 և 1716), «Պայրար», Թավրիզ (թթ. 985 և 986), «Բժշկական տարեցույց» (թ. 1523) և «Տարեցույց, Բժշկական-առողջապահական» (թ. 3072) և այլ հարյուրավորներ, զորս տեղի խնայողության համար զանց կառնեն հոս: Այսպիսիներ կվստան հատորիս մեջ: Հատուկ անուններն հիշենք քանի մը կրկնություններ միայն, ինչպես՝ Գալիակճյան (թթ. 270 և 861), Ալեքսանյան (թթ. 87, 470 և թթ. 51, 935, 1121, 1264, 2848, 2849), Շամտանճյան Մ. (թթ. 2010 և 659, 2548, 2816), Բարկեն Լուսիկոպոս (թ. 2589) և Գույեսերյան Բարկեն (թ. 2961), Գամեր-Արշավիր (թ. 954) և Մեղուտճյան Վարդան (թ. 2258), Ժիրայր Շիրակացի (էջ 597), Զեմլիկճյան Սիմոն (էջ 598), Սիրունի (թ. 767), Սիրունի Հ. (թթ. 148, 168), Սիրունի Հ. Ճ. (թթ. 125, 2651, 2654) և Ճուլյան Հա-

կոր (թ. 2651) շորս անգամ կրկնված նույն անձն է. Գեորգյան Վարդան (էջ 582) շորս անգամ կրկնված և այսպես շատ շատեր:

Սիււլնեի և շիոթումներ կան նաև աշխարհագրական անուններու և վայրերու, ինչպես՝ Եվդոկիա (էջ 553) և Թորատ (էջ 554) նկատված են բոլորովին տարրեր բաշարներ. նույնը Յիլիպեի և Պոլովիվի համար (էջ 561), Երուսաղեմ բաղարը գետնադրած է Եղիպտոսի մեջ (էջ 558), Այնթափը անցած է Սուրիո (էջ 559), Պոլովիտենսը՝ Կանատայի (թ. 2574), Սիլվենը եղած է Սիլվեն (էջ 561) և այլն, և այլն:

Թերթերու հրատարակման թվականներու և այլ նկարագրութեանց սխալներու թվումը մեզմե ավելորդ ժամանակ և էջեր պիտի խշեր: Այսուհանդերձ, կփորձինք հիշել մեկ բանիներ, անփափա՞շտ լրացումներով մեզմե:

Թ. 96—«Ակպտակ», Սոֆիա: Ելած է իբր ազգային, գրական և երգիծական շարաթաթերթ, խմբագիր՝ Արամ Գուրպեթյան, 14 մարտ 1915-են մինչև 4 ապրիլ 1925, տպ. Արարատ, Սոֆիա, 4 էջ. լույս տեսած է 4 թիվ միայն:

Թ. 151—«Արևելյան ծանուցմանց», Աստրախան, 1825: Ինձ ծանոթ է «Արևելյան ծանուցմանը» ելած 1816 թ., հայերեն և ռուսերեն լեզուներով: Ակսած է 5 հունվար 1816-ին և դադարած՝ 5 հուլիս 1816 թ.: լույս տեսած՝ 27 թիվ միայն:

Թ. 275—«Գիշեր», Պարտիզակ: Ելած է խմբարտիպ:

Թ. 336—«Թերթեկ», Աղերսանգրիա: լույս տեսած է 17 հուլիս 1906-են մինչև 17 օգոստոս 1906, 28 թիվ միայն, արտասահմանի առաջին օրաթերթը, ի սկզբան բանի մը թիվ ելած մեկ թուղթի վրա (երկէջ), հետագային՝ 2 թուղթ (4 էջ):

Թ. 392—«Թուրքիա», Սաամրուլ, Նախ լույս տեսած է որպես երեկոյան ժողովրդական մեծ օրաթերթ՝ 4, ապա 8 էջ, տեր և տնօրեն՝ Մարտիրոս Գոչունյան, սկսած է 1935 թ. փետր. 23-են, ամիս մը այսպես հրատարակվելի հետո միացած «Փամանակի» և կոչված «Փամանակ-Թուրքիա»: Երեք ամիսի շափ այս նոր անվամբ հրատարակվելի հետո բաժանված և նախկին անունով վերածված առաջնության օրաթերթի, 4 էջով: Այդ նոր ձևով լույս տեսած է 15—20 օրվան շափ, ապա վերջնականապես դադարած:

Թ. 426—«Երազունք», 1885, Վառնա: Շիոթթույններ ակներև է: Թերթը, որ հիշված է, եղած է կիսով շափ ֆրանսերեն, խմբագիր՝ Հակոբ Մավիյան: Իսկ հիշատակված Հ. Պոնճուզյանը, Հ. Կուրբեթյանը, Հմ. Խոշպուլյանը, Ս. Ավինը և ուրիշներ հաջորդաբար եղած են խմբարագիր նույնանուն ուրիշ թերթի (թ. 427): Այս թերթը ունեցած է հայատառ թուրքերեն բաժին, իսկ ՚ի տարվան սկիզբը ունեցած է նաև բուլղարերեն առանձին հրատարակություն, 6 թիվի շափ, կիսաշաբաթաթերթ, 9—30 ապրիլ 1899 տեղողությամբ:

Թ. 476—«Արուսարձակ», Վառնա: Ակսած է 1 մայիս 1920-ին, որպես պարբերական հրատարակություն սամկավար կուսակցության, պատ. խմբագիր՝ Սիմոն Պենյան, տպ. Հ. Լուպսյան, 4 էջ: Ելած է որոշ հապաղումներով, 15 թիվ: Տարիեն ավելի դադարե մը հետո վերսկսած է Բ տարին 11 զեկտ. 1921-ին, տեղած՝ մինչև 18 փետր. 1922: լույս տեսած է 7 թիվ միայն: Գ տարին ելած է 20 ամիսներու ընդհատումի հետո, 1 նոյ. 1923-ին, տպ. Գ. Ենովբյան, Վառնա: 15 մայիս 1924-ին հրատարակված որպես նոր շրջան, թիվ 1(50), իբր բաղարական, հասարակական շարաթաթերթ, 4 էջ, տպ. նույնը: Ապա վերածված երկշաբաթաթերթի: Ելած՝ 27 թիվ, դադարած՝ 13 նոյ. 1924-ին (փաստորեն խմբագիր՝ Տիգրան Մարտիրոսյան):

Թ. 753—«Հուլիս», Վառնա: Խորագիրն է այսպես. «Հուլիս», շաբաթական լրագիր քաղաքական, ազգային, կրոնական և ուսումնական, օրական հայ զաղթականությանց ի նվրոպա, հայերեն և ֆրանսերեն, պատասխանատու՝ Գ. Գասպարյան, խմբագիր՝ Ա. Իոաննեսյան (Անդրանիկ Իոաննեսյան), լատինատառ հայերեն և ֆրանսերեն լեզուներով: 4 հունվարեն մինչև 1 մայիս 1885 լույս տեսած: Թիվ 3-են (18 հունվ.), խմբագիր՝ Պ. Ատրունի: Սխալ է թև 1886-ին և 37 թիվ ելած է: Ինձ ծանոթ է մինչև 40 թիվ: Թ. 608—«Կոհակ», Կ. Պոլիս: լույս տեսած է 30 մայիս 1909-են: Հինգ տարիի շափ դադարելի հետո վերսկսած 1919-ին, երբ լույս տեսավ 2 թիվի շափ, մինչև խմբագիր Հմ. Արամյանցի սպանվելը, որպես մատենիչ, 28 փետր. 1919-ին:

Թ. 669—«Հայաստան», Սոֆիա, 1915—1926: Նախ լույս տեսած 6 ամիսի շափ: Ելած՝ 19 մարտ 1915-ին և դադարած՝ կառավարական արգելքով նույն տարվա 26 սեպտ.-ին, հրատարակված՝ 57 թիվի շափ: Արտոնատեր՝ Ղուկաս Մինասյան, պատասխանատու՝ Կրիկոր Վասիլև, խմբագիր՝ Արղունյան (Տիգրան Խաչիկյան), տպ. Բ. Կուլչերով: Մոտավորապես 4 տարի հետո վերահրատարակված 28 հունիս 1919-ին, խմբագիր՝ Սենիկ Վարդանյան, արտոնատեր-պատասխանատու-տպարան՝ նույներու Տեղած մինչև Գ տարի թիվ 144(87), 24 հունիս 1920: Ապա փոխադրված է Պոլովիվ, ուր լույս տեսած է մինչև թիվ 410 (19 նոյ. 1925) զանազան ձևափոխումներև անցնելի հետո խմբագիրներ հաջորդաբար

Թ. 669—«Հայաստան», Սոֆիա, 1915—1926: Նախ լույս տեսած 6 ամիսի շափ: Ելած՝ 19 մարտ 1915-ին և դադարած՝ կառավարական արգելքով նույն տարվա 26 սեպտ.-ին, հրատարակված՝ 57 թիվի շափ: Արտոնատեր՝ Ղուկաս Մինասյան, պատասխանատու՝ Կրիկոր Վասիլև, խմբագիր՝ Արղունյան (Տիգրան Խաչիկյան), տպ. Բ. Կուլչերով: Մոտավորապես 4 տարի հետո վերահրատարակված 28 հունիս 1919-ին, խմբագիր՝ Սենիկ Վարդանյան, արտոնատեր-պատասխանատու-տպարան՝ նույներու Տեղած մինչև Գ տարի թիվ 144(87), 24 հունիս 1920: Ապա փոխադրված է Պոլովիվ, ուր լույս տեսած է մինչև թիվ 410 (19 նոյ. 1925) զանազան ձևափոխումներև անցնելի հետո խմբագիրներ հաջորդաբար

Թ. 669—«Հայաստան», Սոֆիա, 1915—1926: Նախ լույս տեսած 6 ամիսի շափ: Ելած՝ 19 մարտ 1915-ին և դադարած՝ կառավարական արգելքով նույն տարվա 26 սեպտ.-ին, հրատարակված՝ 57 թիվի շափ: Արտոնատեր՝ Ղուկաս Մինասյան, պատասխանատու՝ Կրիկոր Վասիլև, խմբագիր՝ Արղունյան (Տիգրան Խաչիկյան), տպ. Բ. Կուլչերով: Մոտավորապես 4 տարի հետո վերահրատարակված 28 հունիս 1919-ին, խմբագիր՝ Սենիկ Վարդանյան, արտոնատեր-պատասխանատու-տպարան՝ նույներու Տեղած մինչև Գ տարի թիվ 144(87), 24 հունիս 1920: Ապա փոխադրված է Պոլովիվ, ուր լույս տեսած է մինչև թիվ 410 (19 նոյ. 1925) զանազան ձևափոխումներև անցնելի հետո խմբագիրներ հաջորդաբար

Լ. Նազարյանց, Հովհ. Տելեճյան, Գ. Փիլիպպոսյան:

Թ. 1196—«Աղյատ Հայաստան», Կ. Պոլիս, տնօրեն՝ Ա. Արեղյան: Ելած է ոչ թև Կ. Պոլսո, այլ Բեդլինի մեջ, որպես ամսաթերթ, 1948 թվին: Տնօրեն՝ Ա. Արեղյան, նախագահ Հայ ազգային խորհուրդի, 14 էջ:

Թ. 1392—«Արարատ», Նյու Յորք, 1891—1892: Թերթը սկսած է լույս տեսնել 1 հունվ. 1891-ին, որպես Երկշաբաթավերթ, նույն տարվա հուլիս. 8-ին վերածված է շաբաթավերթի, իսկ 1892-ի կիսուն՝ դադարած: Լույս տեսած է ատեն մը հայերեն և անգլերեն լեզուներով: Տասը տարվան դադարե վերջ, 1902 թ. փորձ մը եղած է վերհրատարակելու իբր ամսաթերթ, բայց հաջիվ 2 թիվ լույս տեսած և դադարե վերջնականապես:

Թ. 1404—«Արգավանդ», Վառնա-Ռուսչուկ, 1905: Այս անունով թերթ չէ ելած: Պարզապես ծրագիրը չէ իրականացած: Ուրիշ անթիվ պարզած ըլլալով պարագան, կնկատեմ շեղյալ:

Թ. 1476—«Արոր», խմբագիր՝ Ղևոնդ (բճն.) Փափաղյան, Գալաց: Նույնպես լույս չէ տեսած: Շփոթությունը ծագած կ'ըլի նախապես ելած հայտարարությունն մը, որ չէ իրականացած: Երևի անձանոթ կ'մնա մեր ճշգումը տարիներ առաջ («Բազմավեպ», 1937, էջ 203): Համարել նույնպես շեղյալ:

Թ. 1572—«Գեղունի», Վենետիկ—Ս. Ղազար, 1901—1906, 1909, 1927: Ավելցնել թե լույս տեսած է նաև 1947 և 1949 թթ.: Առաջինը նրվիրված «Բազմավեպ» Ա հարյուրամյակին (1843—1943), իսկ 1949-ինը՝ նվիրված Մխիթար Արքայհոր մահվան Բ դարադարձին (1749—1949): Խմբագիրներու ցանկին մեջ հիշել նաև Ն. Մեսրոպ վրդ. Ճանաչյանը:

Թ. 1697—«Երոշակ», 1891—1932, Ժնև-Փարիզ: Թթ. 1 և 2-ը ելած են Թիֆլիսի գաղտնի տպարանին մեջ, վրան նշանակված. դիտումնավոր կերպով, Վիեննա, Աղատ տպարան, թթ. 3 և 4-ը՝ Ռուսմանիո մեջ, վրան, նույն նկատումներով, նշանակված Լոնտոն: Իսկ թ. 5-են մինչև 1914 տարին՝ ելած Ժնևի մեջ: Տասնուկես տարվան դադարե հետո վերահրատարակված, նոր շրջան թիվ 1(243) Փարիզի մեջ, 1925 հուլիսին:

Թ. 2209—«Հայ աշխարհ», Բրյուսել: Զէրատարակված հայերեն ու անգլերեն, այլ հայերեն ու ֆրանսերեն լեզուներով:

Թ. 2348—«Հայկական տարեցույց», Գալաց, խմբագրյալ Բ. Տ. Ղևոնդ Փափաղյանի (հայերեն-ռուսերեն լեզուներով): Ելած է հուլիս. և ուսմաններն լեզուներով, խմբագիր Ղևոնդ Բճն. Փափաղյան, թարգմանյալ ողմա-

ներեն ծանոթությամբ և դիտելյոք ի Լուսիկ Սրմաղաշյանե, երբեմն ուսուցիչ Յաշի հայոց վարժարանի, Կալաց (խմբագրի անվան դրված ի տառը պետք չէ ըլլա գլխադիր, հատուկ անուն չէ, այլ պարզապես գրաբարածե նախդիրը յացառական հոլովի):

Եվ այսպես՝ շարքը հարյուրներու հասնող ուրիշ վրիպակներու և անճշտություններու, զորս զանց կ'անենք տեղի խնայողության համար:

Առիթեն օգտվելով, ստորև կուտանք «Մատենագիտության» մեջ չհիշատակված կարգ մը պարբերականներու ցուցակ մը: Այդ պարբերականներու մեկ մասը կարոտ է տարբեր ճշտումներու (խմբագիրը, տպարանը, լույս տեսած համարներու թիվը և այլն):

ԱԶԳԱԿ—ՇԱԲԱԹՈՐՅԱԿ, Բեյրութ, 1944—1947-ի միջև:

ԱԼՊՈՄ, պատկերազարդ տարեգիրք, 1932, հրտ.՝ Գրիգոր Գալֆա, Կահիրե, 22 էջ:

ԱՇԽԱՐՀ, գրականության և արվեստներու, հունվար 1967, Պանյո (Ֆրանսա), խմբագիր՝ Ավետիս Ալիբաբյան:

ԱՊՏԱԿ, Երզնթավերթ, Մուշ (Թուրքիա), խմբագիր՝ Մխիթար Աբրոյան (1890-ական թթ.):

ԱՏԱՆԱ, լրաթերթ, 1920, Ատանա (Թուրքիա): Արտոնատեր և խմբագիր՝ Բարսեղ Շալճյան (Կեսարացի): Միջոց մը ելած հայերեն և թուրքերեն լեզուներով:

ԱՐԱՐԱՏ, շաբաթավերթ, Կ. Պոլիս, խմբագիր՝ Գրիգոր Պաղտասարյան, կարճատև (1878 թթ.):

ԱՐՁԱԳԱՆՔ, շաբաթավերթ, 1911, Հոռմ—Կ. Պոլիս, հրտ.՝ նախկին կաթոլիկ տպարարք Բերդյան: Նույն տարին փոխադրված է Կ. Պոլիս և տպված Սաբայան տպարանին մեջ: ԲԱՐԻՉ, հայաթերթ, Կ. Պոլիս (կարճատև, 1890-ի ատեններ):

ԳՈՐԾ, Բեյրութ, 1912:

ԳԱՐԻՈՒԲԱԼԱ, պատկերազարդ շաբաթավերթ, Թիֆլիս, 1908:

ԵՓՐԱՏ, շաբաթավերթ, օրկան Հալեպի Ս. Գ. Հնչակյան մասնաճյուղի, Հալեպ, 1919, խմբագիր՝ Գրիգոր Մուշյան: Լույս տեսած է 4 թիվ միայն:

ԶԱԶԱ, Երզնթավերթ, Կ. Պոլիս (1908-ի ատեններ):

ԶԱՐԻ, նորաձևության հանդես, Փարիզ, 1900, խմբագիր՝ Մարի Սվաճյան, կարճատև:

ԸՆԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ, հանդես, Կ. Պոլիս, 1886—1888, հրտ.՝ Գ. Պաղտասարյան, տպ. Գ. Պաղտասարյան:

ԻԶՄԻՐԱԿԱՆ, երկչաբաձևական գավեշտաթերթ,  
Սոֆիա, 1931—1933, խմբ.՝ Ս. Իզմիրլյան,  
տպ. Մասիս: լույս տեսած 20 թիվ:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, Բեյրութ, 1956—1960:  
ԼԵԳԵՆԵԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ, Փարիզ, 1944:

ԾԱՂԿԱՍՏԱՆ, Բոմբեյ, 1822 (բանի մը թիվ  
լույս տեսած):

ԾԱՆՈՒՅՈՒՄ (ԻՎԱՆԻՆ), Կ. Պոլիս, 1874  
(հայերեն և թուրքերեն լեզուներով):

ԿԱՅՆ, օրկան հունական կոմ. կուս. Սելա-  
նիկի հայ ֆրակցիայի, Սելանիկ, 1930—  
1931 (4 թիվ էլած):

ԿԱՐԴԱ, թերթիկ, Վաննա, հրտ.՝ Արրահամ Ա-  
միրխանյանց:

ԿԵՆՈ-ԿՈ, երգիծական ամսագիր, Նյու Յորք  
(1920):

ԿՌՈՒՆԿ, երգիծաթերթ, Երևան, 1911—1912,  
հրտ.՝ Մուշեղ Բաղրատունի:

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏ, պարբերական հրատարակու-  
թյուն Հայ աշակերտական միության ի  
Պուլկարիա, Ռուսշուկ, Ներսես Խրիսթամ-  
ան, տպ. Արաբս. Սոֆիա, ապր. 1927  
(1 թիվ):

ՀԱՅԱՍՏԱՆ, պաշտոնաթերթ Հ. Հ. Դաշնակցու-  
թյան նոր սերունդի, 1947, Սեփրան (Ֆը-  
րանսա), Նույնը ֆրանսերեն լեզվով:

ՀԱՅԱՍՏԱՆ, շաբաթաթերթ, օրկան Հ. Հ. Դ. նոր  
սերունդի, Փարիզ, խմբ.՝ Գ. Փափազյան  
(1967-ի ատեններ: Արդյոք կապ մը ունի՞  
նախորդին հետ):

ՀԱՅ ԸՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՉԱՅՆԸ, պար-  
բերաթերթ, Կահիրե, 1932:

ՀԱՇԻՎՆԵՐ, թուրքիկ թերթ, Ադերսանգրիա,  
Բարսեղ Շապուգյան (1908-ի ատեններ):

ՀԱՎԵԼՎԱՍ օՄԵՂՈՒՆ-Ի, Կ. Պոլիս, 1864,  
156 էջ:

ՀԱՔԻՔՍԹ, Այնթապ, 1914, հրտ.՝ Խարալամպոս  
Պուսխանճրոզյու (հայատառ թուրքերեն):

ՀԱՐՎԱԾ, եգիպտոս (1905):

Հ. Մ. Ը. Մ., տեղեկատու հայ մարմ. կրթ. ընդհ.  
միության, Եոֆիա, 1934, պատ. խմբ.՝  
Ա. Գատ Աբասյան, տպ. Ուսձիբա, Սոֆիա  
(ելած 1 թիվ):

ՀՈՒՆԶՔ, գրական պարբերաթերթ, հրտ.՝ Հայ  
գրական միության, Ֆիլատելֆիա, 1954:

ՀՈՒՇԱՐԱՐԻ ԱԼՄԱՆԱԿ, թատերական-գեղար-  
վեստական, Թիֆլիս, կազմեց Ա. Վրույր,  
Գ շրջան, 1918:

ՂԱՐՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ, Ենոքյա թերթ, Կարս, հրտ.՝  
Նշան Արծրունի (1878-ի ատեններ: Ելած  
3 թիվի չափ):

ՄԱՇՏՈՑ, տարեգիրք, Պաղտատ, հրտ. Ազ-  
գային միացյալ վարժարանի, 1967:

ՄԵՐ ՏՈՒՆԸ, ամսաթերթ Գարակյոզյան սա-  
նուց միության, Ստամբուլ, պատ.-տնօրեն՝  
Կարպիս Ե. Մուրատյան (1967):

ՆԵՎԱ ԿԱՄ ՍԵԴԱՅԻ ԷՐՄԵՆՅԱՆ, շաբաթա-  
թերթ, Կ. Պոլիս, 1910, խմբ.՝ Միհրան  
Արիկյան (հայատառ թուրքերեն):

ՆՈՐ ԳԵՂԻ, ազգագրական հանդես, Բեյրութ,  
1964—1965, տպ. Տոնիկյան (Բ տարին,  
80 էջ):

ՆՈՐ ՍԻՐՈՒՆԻՆԻ, օրաթերթ, Հալեպ, 1951:

ԶԱՀԱԿԻՐ, գրական, գեղարվեստական պար-  
բերաթերթ, կիսամսյա, Բեյրութ, տն-  
խմբ.՝ Վարդան Գևորգյան (1929-ի ատեն-  
ներ):

ՌԱՀՎԻՐԱ—ՄԵՆՏՈՐ, հրտ.՝ բողոքականնե-  
րու, Մարաշ, 1920 (հայերեն և թուրքերեն  
լեզուներով):

ՍԱՆԱՄԵ (տարեցույց) 1894 տարվո, Կ. Պո-  
լիս, հրտ.՝ Պ. Պալենց զրատան, 320 էջ  
(հայատառ թուրքերեն):

ՍՊԱՐՏԱԿ, պարբերաթերթ, Բեյրութ, խմբ.՝  
Սեդրակ Ասլաճյան (1939): Ընդհատակ  
յա թերթ առաջադիմական ուղղությամբ:

ՍՏՈՒԴԻՈՒՄ, հանդես Լազարյան ճեմարանի  
5-րդ դասարանի, Մոսկվա, խմբ.՝ Հ. Համ-  
բարձումյան (1899—1900 թթ.):

ՍՔԱՈՒՏ, կիսամսյա, հրտ.՝ Հ. Մ. Ը. Մ.-ի  
5-րդ մ-ճյուղի սքառուտ. խորհուրդի, Ռուս-  
շուկ, 1928, տպ. Ռահվիրա-Պ. Պալրքճյան,  
Սոֆիա, խմբ.՝ Ներսես Խրիսթամյան (4  
թիվ):

ՎԱՀԱԿՆ, հրտ. Հ. մարմն. Շանթ միության  
Վահագն խումբին, Պուլդղիվ, 1934, տպ.  
Իզմիրլյան, արտոնատեր՝ Կ. Գարուլյան  
(1 թիվ):

ՎԵՐԵԼՔ, Բեյրութ, 1947—1958 (հայերեն և  
ֆրանսերեն):

ՏԵՂԵԿԱՏՈՒ, ելիտասարդական գաղտնի թերթ.  
Վան, 1915:

ՏԻԳՐԻՍ, պարբերաթերթ, Նյու Յորք (1907-ի  
ատեններ):

ՓԱՐՈՍԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ, ամսաթերթ, Պը-  
լուդղիվ, 1936 փետր.-հունիս, արտոնա-  
տեր՝ Տ. Մարտիրոսյան (խմբ.՝ Սուրեն  
Վեցիկյան), տպ. Փարոս, Պուլդղիվ, 6 էջ  
(5 թիվ էլած) և այլն:

ԵՎ աչսպես, «Հայ պարբերական մամուլի  
մատենագիտությունը», ինչպես պարզեցիկ  
արդեն, իր ներկայացուցած բազմաթիվ վրի-

պումներով և զգալի սպականերով, վերամշակելի աշխատություն մը կներկայանա և չի կրնա բլլալ հեղինակավոր ուղեցույց մը ամեն անոնց, որ ապագային պիտի ուզեն

ճշգրիտ պատկերը ունենալ մեր գրականության կարևոր ճյուղերն մեկուն:

ՆԵՐՍԵՍ ԳԱՍԱԳՅԱՆ  
(Բուլղարիա)

ARISTAKÈS DE LASTIVERT, *Récit des malheurs de la nation arménienne*. Traduction française avec introduction et commentaire par Marius Canard et Haïg Berbérian, d'après l'édition et la traduction russe de Karen Yuzbashian. Éditions de Byzantion, Bruxelles, 1973, p. XLV+148.

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏԻ, Պատմություննեղութեանց ազգին հայոց: Ֆրանսերեն թարգմանությունը, նախաբանը և ծանոթագրությունները Մարիուս Կանարի և Հայկ Պերպերյանի: Ըստ Կարեն Յուզբաշյանի հրատարակության և ռուսերեն թարգմանության: «Byzantion»-ի հրատարակչություն: Բրյուսել, 1973, էջ XLV+148:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համատեղ ջանքերով վերջին տասնամյակում ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է հայ դասական մատենագիրների երկերը պարունակող մի արժեքավոր մատենաշար, որն ընդգրկում է պատմագրական վեց կարևոր գործեր: Արանցից շարքը՝ Արխատակես Լաստիվերցու, Միմենոս Լեհացու, Առաբել Դավրիժեցու և Զարարիա Քանաբեղոսի երկերը տպագրվել են Մոսկվայում, իսկ երկուսը՝ կարճեցյալ Շապուհ Բագրատունու և Արրահամ Կրետացու երկերը՝ Երևանում: Թարգմանական բարձր մակարդակով կատարված սույն աշխատանքները, որոնց հեղինակներն են գիտնական թարգմանիչներ Կ. Յուզբաշյանը, Մ. Դարբինյանը, Լ. Խանյարյանը և Ն. Ղորղանյանը, հայ պատմագրությունը ռուսերեն ընթերցողին ներկայացնելու իրենց անմիջական զերը կատարելուց բացի նպաստում են մեր մատենագիրների երկերը օտար լեզուներով թարգմանելու գործին: Ասվածի լավագույն ապացույցն է Արխատակես Լաստիվերցու «Պատմության» ֆրանսերեն թարգմանությունը, որը կատարված է Կ. Յուզբաշյանի՝ Մոսկվայում լույս տեսած ռուսերեն թարգմանության<sup>1</sup> հիման վրա:

Անցյալ տարի Բրյուսելում հրատարակված ֆրանսերեն թարգմանությունը կազմում է «Bibliothèque de Byzantion» մատենաշարի 5-րդ հատորը: Մատենաշարն ընդգրկում է համաշ-

խարհային մատենագրության բյուզանդագիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր: Հայ մատենագրի երկի սույն մատենաշարով հրատարակվելը նշան է այդ երկի բարձր գնահատականի:

Թարգմանության հեղինակն է հայագիտական իր վաստակով մասնագետներին արդեն ծանոթ հայագետ Մարիուս Կանարը, որը միաժամանակ հանդիսանում է Փարիզում ֆրանսերեն հրատարակվող հայագիտական հայտնի հանդեսի «Revue des études arméniennes» խմբագրական կազմի անդամ: Ռուսերեն թարգմանությունից նրա կատարած ֆրանսերեն թարգմանությունը Կ. Յուզբաշյանի 1963 թ. հրատարակած հայերեն բնագրի հետ համեմատել և ճշգրտել է արդի արտասահմանյան հայագիտության ամենամավաղ ներկայացուցիչ Լ. Պերպերյանը, որը հիշյալ հանդեսի հրատարակությունը վարելուց բացի հայտնի է նաև հայագիտական մի շարք գործերով:

Արխատակես Լաստիվերցու երկի ֆրանսերեն առաջին թարգմանությունը կատարվել է ուղիք 110 տարի առաջ՝ 1864 թ. Փարիզում, ֆրանսիացի հայադեռ է. Պրյուդոմի կողմից<sup>2</sup>, Սա եվրոպական լեզվով կատարված միակ ամբողջական թարգմանությունն է, որի միջոցով հայ պատմիչի երկը թափանցել է բնդհանուր պատմագիտության սահմանները: Մանավանդ ռուսերեն

<sup>1</sup> «Повеествование вардапета Аристакеса Ластивертши». Перев. с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения К. Н. Юзбашьяна, М., 1968.

<sup>2</sup> «Histoire d'Arménie... par Arisdagues de Lasdiverd; traduite... et accompagnée de notes par M. Everiste Prud'homme», Paris, 1864.